



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 13/20**

19.10.2020 թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանի դատավոր Գրիգոր Առաքելյանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ՎԴ/0015/05/20 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 4-րդ հոդվածին:

Ըստ Դիմողի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 29-րդ գլխով օրենսդիրը հնարավորություն է ընձեռում դատարանին վերահսկելու գործադիր իշխանության մարմինների վարչարարությունը և դատարանին է վերապահել գործադիր իշխանության մարմնի կողմից սկսված վարչական վարույթն ավարտին հասցնելու իրավասությունը:

Հարկ է ընդգծել, որ քրեական և վարչական իրավախախտումների տարանջատման հիմքում դրված է արարքի վտանգավորության աստիճանը, և եթե օրենսդիրը տվյալ արարքի համար նախատեսել է վարչական պատասխանատվություն, ուրեմն տվյալ արարքի հանրային վտանգավորությունը առավել նվազ է, և այդ դեպքում գործադիր իշխանության մարմինը պետք է քննի տվյալ գործը և կայացնի որոշում, իսկ այդպիսի որոշման իրավաչափության վիճարկումը պետք է թողնվի պատասխանատվության ենթարկված անձի կամահայտնությանը՝ վիճարկել դատական

կարգով, թե ոչ, և սա է այն սահմանը, որով քրեական արդարադատության ամբողջ ընթացակարգը տարբերվում է վարչական իրավախախտումներով պատասխանատվության ենթարկելու ընթացակարգից:

Դիմողն ընդգծում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը որևէ ողջամիտ տարանջատում չի նախատեսում, թե ինչու է նույն օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված զանցակազմերի դեպքում վարչական պատասխանատվություն կիրառում ոչ թե վարչական մարմինը, այլ դատարանը: Եթե դա բխում է արարքի վտանգավորությունից, ապա նման իրավախախտումները պետք է բնորոշվեն որպես հանցանք և տեղ գտնեն ՀՀ քրեական օրենսգրքում, իսկ եթե այդ արարքները չունեն հանցանքին բնորոշ վտանգավորություն, ապա անտրամաբանական է դրանց համար պատասխանատվության կիրառումը վարչական մարմինների իրավասությունից դուրս թողնելը:

Ըստ էության, ստեղծվում է մի իրավիճակ, երբ դատարանն իրականացնում է գործադիր իշխանության լիազորությունները՝ իրականացնելով վարչարարություն, քանի որ վարչական դատարանը, վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դիմումով, ֆիզիկական կամ իրավաբանական անձին ենթարկում է վարչական պատասխանատվության, այսինքն, կարելի է ասել, ընդունում է վարչական ակտ, որը հանդիսանում է վարչական վարույթի եզրափակիչ փուլը, այն պայմաններում, որ մյուս փուլերն իրականացնում է վարչական մարմինը: Դիմողի համոզմամբ, սա հանդիսանում է օրենքի գործադրման լիազորություն, քանի որ դրա արդյունքում կյանքի են կոչվում որոշակի հարաբերությունները կարգավորող նորմերը: Անձին վարչական պատասխանատվության ենթարկելը ոչ մի կապ չունի վարչական արդարադատության հետ:

Դիմողի գնահատմամբ, առկա չէ որևէ ողջամիտ տարբերակում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանված այլ զանցակազմերի և այն զանցակազմերի միջև, որոնց վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասություն վերապահվել է վարչական դատարանին: Այն գործերով սահմանված սանկցիաները, որոնք նշված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածում և քննում են վարչական դատարանները, չեն հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց այնպիսի իրավունքների սահմանափակում կամ իրավունքներից զրկում, որոնք պետք է քննի դատարանը,

ավելին, այդ հոդվածներով սահմանված սանկցիաները երբեմն ավելի մեղմ պատժի տեսակ կամ պատժաչափ են սահմանում, քան նույն օրենսգրքով սահմանված այլ զանցակազմեր:

Դիմողը նշել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի բովանդակության վրա էական ազդեցություն ունեցած Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը վարչական պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորություն չի նախատեսում:

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի, ինչպես նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 4-րդ հոդվածին:

Վիճարկվող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

*2. Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝*

*1) ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝

*Վարչական դատարանները քննում են՝*

*1) սույն օրենսգրքի 41.5, 97<sup>2</sup>, 97<sup>3</sup>, 147, 166<sup>1</sup>, 172.3 հոդվածներով, 180<sup>1</sup>, 182, 183<sup>1</sup>, 189<sup>2</sup> - 189<sup>6</sup>, 189.9-189.10 հոդվածներով, 198<sup>2</sup> հոդվածի չորրորդ մասով և 206<sup>5</sup>, 206<sup>10</sup>, 206<sup>11</sup>, 206<sup>12</sup>, 206<sup>13</sup>, 206.16, 206.14 հոդվածներով նախատեսված ղեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու*

իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170<sup>Ժ</sup>, 189<sup>Ժ</sup>, 189<sup>ԺԸ</sup> հոդվածներով և 198<sup>Ժ</sup> հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 206<sup>Ժ</sup> հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 206<sup>Ժ</sup> հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5.1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական ղեկարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլուխը վերաբերում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթին, մասնավորապես՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումին ներկայացվող պահանջներին, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցման կարգին, դատաքննությանը և դատական ակտին:

Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝

*Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:*

Այսպես, Սահմանադրության 4-րդ հոդվածը, բաժանելով պետական իշխանությունը երեք անկախ և ինքնուրույն թևերի, միաժամանակ սահմանում է նրանց միջև փոխզույգման և հակակշռման կառուցակարգ:

Իշխանությունների տարանջատումը, առանց որի անհնար է պատկերացնել իրավական պետությունը, առաջ է քաշում անհրաժեշտ իրավական կառուցակարգերի գործադրման միջոցով պետական տարբեր մարմինների միջև սահմանադրորեն ամրագրված փոխհարաբերությունների հավասարակշռության պահանման և դրանց կայուն զարգացման խնդիր, որտեղ սկզբունքային նշանակություն է վերապահվում զսպումների և հակակշիռների համակարգին, քանի որ դրա կիրառման արդյունքում իշխանությունների ՈստատիկՍ տարանջատմանը հաղորդվում է «դինամիկ» բնույթ:

Իշխանությունների տարանջատման արդյունավետ կենսագործման նախապայմաններից մեկը պետական իշխանության մարմինների իրավասության սահմանների հստակ ամրագրումն է, որը պետական իշխանության ինքնասահմանափակման ամենաարդյունավետ եղանակներից է: Այստեղ կարևորվում է վերջինիս նորմատիվ-իրավական հիմքը: Իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը կողջված է երաշխիքներ ստեղծելու անձանց իրավունքների և ազատությունների իրացման և պաշտպանության, իրավական պետության և ժողովրդավարության ամրապնդման համար:

Ինչպես արդարացիորեն նկատել է Դիմոդը, ներկա օրենսդրական կարգավորումների արդյունքում, ըստ էության, ստեղծվում է մի իրավիճակ, երբ դատարանն իրականացնում է գործադիր իշխանության լիազորությունները՝ իրականացնելով վարչարարություն, քանի որ վարչական դատարանը, վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի դիմումով, ֆիզիկական կամ իրավաբանական անձին ենթարկում է վարչական պատասխանատուության, այսինքն՝ կարելի է ասել, ընդունում է վարչական ակտ, որը հանդիսանում է վարչական վարույթի եզրափակիչ փուլը, այն պայմաններում, որ մյուս փուլերն իրականացնում է վարչական մարմինը: Դա հանդիսանում է օրենքի գործադրման լիազորություն, քանի որ դրա արդյունքում կյանքի են կոչվում որոշակի հարաբերությունները կարգավորող նորմերը: Անձին վարչական

պատասխանատվության ենթարկելը ոչ մի կապ չունի վարչական արդարադատության հետ:

Առկա չէ որևէ ողջամիտ տարբերակում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանված այլ զանցակազմերի և այն զանցակազմերի միջև, որոնց վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասություն վերապահվել է վարչական դատարանին:

Իշխանությունների տարանջատման հայեցակարգի շրջանակներում դատական իշխանության կողմից գործադիրին հակակշռելու յուրահատուկ կառուցակարգ է վարչական արդարադատությունը: Թեև գործադիր իշխանությունն իշխանության ինքնուրույն և անկախ ճյուղ է, այդուհանդերձ, դատական իշխանությունն օժտված է նրա գործունեությունը վերահսկելու լիազորությամբ:

Սակայն, դատարանի այս գործառույթը կոչված է բացառապես ապահովելու Սահմանադրության 61-63-րդ հոդվածներով երաշխավորված՝ մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի լիարժեք իրացումը հանրային իրավունքի բնագավառում: Այսինքն՝ վարչական արդարադատությունը բացարձակ բնույթ չի կրում և եզրագծված է հստակ նպատակով, որն էլ արդարացնում է դատական իշխանության կողմից գործադիրի գործունեության միջամտությունը:

Վերը նշվածն, իր հերթին, ընդգծում է այն սահմանը, որից դուրս չի կարող գալ վարչադատական վերահսկողությունը: Դա մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունն է, որի անհրաժեշտությունը յուրաքանչյուր դեպքում գնահատում է կոնկրետ անձը: Սահմանադրության 61-63-րդ հոդվածներում ամրագրված մեխանիզմի շրջանակներում յուրաքանչյուր ոք ինքն է որոշում՝ դիմել, թե չդիմել դատական պաշտպանության: Սահմանադրական այս դրույթներն ընդամենը հնարավորություն են տալիս մարդկանց դատական կարգով բողոքարկելու, ի թիվս այլնի, գործադիր իշխանության մարմինների այն ակտերը, որոնք միջամտել են իրենց իրավունքներին: Սակայն, եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը նախընտրում է չօգտվել իրեն ընձեռված իրավունքից, ոչ ոք չի կարող պարտադրաբար տրամադրել վերջինիս պաշտպանություն: Ըստ այդմ, պարզ է դառնում, որ գործադիր իշխանության գործունեությունը վերահսկելու դատարանի լիազորությունը կարող է գործադրվել բացառապես դրա արդյունքում տուժած ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցի հիման վրա: Եթե վերջինիս սահմանված կարգով ձևակերպված

կամարտահայտությունը բացակայում է, դատարանն իրավասու չէ միջամտելու նույնիսկ այն դեպքում, երբ ակնհայտորեն խախտվում են մարդկանց իրավունքները:

Հարկ է նկատել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, մեծապես կարևորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էական տարր, 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարևոր գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս աստյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս աստյանին»: Հանձնարարականը նաև ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,

- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին: Ըստ նշված օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Իսկ նույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից (հոդված 20):

Վերոգրալի համակարգային վելուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ վարչական մարմինը հարուցում է վարչական վարույթ, իրականացնում վարչարարություն, որն ուղղված է վարչական ակտ ընդունելուն, սակայն վարչական վարույթն ավարտին չի հասցվում վարչական մարմնի կողմից, այլ այն փոխանցվում է դատարանին՝ վարչական վարույթն ավարտին հասցնելու և անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Ստացվում է, որ դատարանը տվյալ դեպքերում կայացնում է ոչ թե դատական ակտ, այլ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վարչական ակտ, ինչքան էլ որ այն դատական ակտ համարվի: Գործող կարգավորմամբ վարչական դատավարության միջոցով է ավարտին հասցվում վարչական վարույթը: Այսինքն՝ վարչական վարույթի հարուցման փուլն իրականացնում է վարչական մարմինը, իսկ ընթացիկ և եզրափակիչ փուլերը, որոնք վարչական արդարադատության հետ առնչություն չունեն, վարչական դատարանը:

Այսպես, հանգում ենք այն եզրակացության, որ Սահմանադրության 4-րդ հոդվածը, բաժանելով պետական իշխանությունը երեք անկախ և ինքնուրույն թևերի, սահմանելով նրանց միջև փոխզույգման և հակակշռման կառուցակարգեր, այնուամենայնիվ գործադիր իշխանությանը բնորոշ որոշ լիազորություններ վերապահել է դատական իշխանությանը, այդ կերպ դատական իշխանությանը վերապահելով վարչադատավարական վերահսկողության հետ առնչություն չունեցող գործադիր իշխանության լիազորություն՝ չհիմնավորելով դրա անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը, չսահմանելով հստակ չափորոշիչներ, թե ինչու պետք է նշված գործառույթն իրականացնի ոչ թե վարչական մարմինը, այլ դատարանը: Սակայն իրեն իավական հռչակած պետությունում իշխանության 3 թևերի միջև գործառույթների բաշխումը պետք է լինի հստակ, հիմնավորված և նպատակաուղղված, որով առաջին հերթին պետք է երաշխավորվեն անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները և ազատությունները:

#### **Անփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է**

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի, ինչպես նաև՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ



հողվածի համապատասխանությունը Սահմանադրության 4-րդ հողվածին  
խնդրահարույց է:

*Համակարգող՝*

*Լյուդվիկ Դավթյան*